ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/45» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

14 հուլիսի 2025թ.

Ժամը 12:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Արմեն Խաչիբաբյան

Հանձնաժողովի անդամներ՝ Տիգրան Դավթյան, Հայկ Հովհաննիսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Նելլի Աբովյան

1.Էլեկտրոնային աճուրդի հայտերի ներկայացման վերջնաժամկետի և սկսելու մասին

1.1 Ընդունել ի գիտություն, որ «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/45» ծածկագրով հայտարարված էլեկտրոնային աճուրդը հայտարարվել է 30.06.2025թ.-ին, իսկ հայտերի ներկայացման վերջնաժամկետն է 11.07.2025թ-ին ժամը 11:00-ին, էլեկտրոնային աճուրդը սկսվել է 14.07.2025թ.-ին ժամը 11:00-ին:

2. Գնման հայտով սահմանված գնման առարկաների քանակը և գինը.

Չափաբաժնի հ/հ	Անվանումը	Հաստատված քանակը	Պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված գնման հայտով նախատեսվող գին /ՀՀ դրամ/
1.	Ատրճանակի պատյան /ՊՄ 9մմ/	100 հատ	400000
2.	Ատրճանակի ամրակապ /ՊՄ 9մմ/	50 հատ	100000

3. Էլեկտրոնային աճուրդի հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

3.1 «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/45» ծածկագրով հայտարարված էլեկտրոնային աճուրդին մասնակցել է թվով մեկ մասնակից.

Հ/Հ	Մասնակցի անվանումը /անունը/	ՀՎՀՀ	Հասցե	Էլ.Փոստ	Հեռ.
1.	«ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ 88» ՍՊԸ	01075543	Ք.Երևան Գայի պողոտա 31/34	bghda88@gmail.com	098-81-56-65

3.2 Հաշվի առնելով առաջին տեղ զբաղեցրած Մասնակից՝ «ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ 88»-ի կողմից ներկայացված հայտում առկա անհամապատասխանությունները՝ գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց՝ մեկ աշխատանքային օրով կասեցնել գնման ընթացակարգը և վերոհիշյալ մասնակցին տալ շտկման հնարավորություն, մասնավորապես՝

- N1 և N2 չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած Մասնակից՝ «ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ 88» ՍՊԸ-ի դիմում-հայտարարությունում բացակայում է էլեկտրոնային ստորագրությունը և հրավերի 4.3 կետի 1-ին մասի ե/ ենթակետով սահմանված հավելված 1.3-ը՝ իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայք էջի հղումը և առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր դաշտի տեխնիկական բնութագիր սյունակներում ինֆորմացիան բացակայում էր:

- Գնման հայտի շտկման համար սահմանված ժամանակահատվածում Մասնակցի կողմից համապատասխան շտկումն իրականացնելուց հետո, վերջինիս հայտը կգնահատվի բավարար, հակառակ դեպքում Մասնակցի հայտը կգնահատվի անբավարար և կմերժվի:

4.Տեղեկություններ հրավերի վերաբերյալ հարցումների և պարզաբանումների մասին

4.1. «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/45» ծածկագրով հայտարարված էլեկտրոնային աճուրդի վերաբերյալ հարցումն ու պարզաբանումը ներկայացված են ստորև.

ՀԱՐՑՈՒՄ. Բարև Ձեզ հարգելի պատվիրատու, խնդրում եմ պարզաբանել, Ատրճանակի պատյանի /ՊՄ 9մմ/ գույնը նշված է Սև կամ կանաչ զինվորական, արդյո՞ք Ձեր համար բալիստիկ կտոր ((Cordura)բարձր որակի)-ի Մուլտիկամ գույնը ընդունելի է. Եթե ոչ, ապա կարո՞ղ ենք առաջարկել սև օքսֆորդ կտորը, արդյո՞ք այն Ձեզ համար ընդունելի է.

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ. Համաձայն 04.05.2017թ.-ի ՀՀ կառավարության N 526-Ն որոշման Հավելված 1-ի՝ «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 22-րդ ենթակետի վերը նշված հարցմանը պարզաբանում չի տրամադրվել, քանի որ հարցումը վերաբերում է առաջարկվելիք ապրանքի հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրին համարժեքության համապատասխանությանը.

5. Մասնակիցների գնային առաջարկները.

5.1. Մասնակիցների կողմից առաջարկված նախնական և վերջնական գնային առաջարկները ներկայացված են սույն արձանագրության N1 Հավելվածում (կցվում է):

6. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի նշանակման մասին.

6.1. Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել շտկման վերջնաժամկետը լրանալուց հետո՝ նույն օրվա ընթացքում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ **Ա. Խաչիբաբյան**

Քարտուղար _____ **Ն. Աբովյան**

Անդամներ՝ _____ **Տ.Դավթյան**

_____ **Հ. Հովհաննիսյան**

Հավելված 1 ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/45 ծածկագրով գնման ընթացակարգի Մասնակցի գնային առաջարկը ՀՀ դրամ

Չափաբաժնի համար	Հրաղեցրած տեղ	Ներկայացված հայտեր	Նախահաշվային գին	Նախնական առաջարկ			Վերջին առաջարկ		
				Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին
1	1	«ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ 88» ՍՊԸ	400000	1420000000	20 %	1704000000	333333	20 %	399999.60
2	1	«ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ 88» ՍՊԸ	100000	1420000000	20 %	1704000000	83333	20 %	99999.60